

ՄԱՐՏԻՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

«Բազմավեպ»ի ներկայ թիով կու տամք բարգմանարար հատուածներ ասորի իսահակ վրդ. Արմալէի «Մարտինի ջարդերու պատմութիւնը» հատորէն:

Վերոյիշեալ գիրքը, որ քիչ ծանօթ է հայերու, գրուած է արաբերէն լեզուով: Հեղինակը որ ակամատես եւ ակամջալուր եղած է իր պատմածներուն, կը գրէ. «Ջանացիմ կարելի եղածին չափ հաւատարիմ ըլլալ. անոր համար գոհացանք մեր ակամջով լսած լուրերով, այն հազուագիւտ անձերէն, որոնք ազատեցան ստոյգ մահէ»:

Գիրքը տպուած է Պէյրուս, 1919ին, 504 էջոց, առանց հեղինակի անուան, «Ակամատեսի գրիչով» յայտարարութեամբ:

Մեծ հղեանք շուրջ գրուած բազմաթիւ գրքերու եւ յօդուածներու վրայ, նորութիւններ կ'աւելցնէ ասորի վարդապետին գիրքը:

Իբր նախաբան կու տամք Մարտինի բեմին եպիսկոպոսներու գաւազնագիրքը, սկսեալ Գրպօ. Մելիոն Թագապետանէն:

Ա.

Ի Բ Բ ՆԱԽԱԲԱՆ

ՄԱՐՏԻՆԻ ԹԵՄԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

Մենք ուղեւորով մասնականացնել մեր խօսքը Միջագետքի Հայոց Թեմին վրայ, կ'ըսենք թէ Մարտին էր (եւ մինչեւ հիմակ ալ է) Մարտինի Երջանկայիշատակ Տէր Մելիոն Թագապետանէն սկսեալ, Հայ կաթողիկէներու բազմութեան նայելով, ամէնէն մեծ եւ ամէնէն ծաղկեալ թեմը:

Ահաւասիկ Մարտինի թեմին եպիսկոպոսներու ցանկը այդ օրէն մինչեւ մեր օրերը:

Ա) Տէր Մելիոն ԹԱԶՊԱՋԵԱՆ. մենք բացի Տէր Գալուստէն (1601-1620), եւ Տէր Սարգիսէն (1627-1632), որոնք Մարտինի թեմը վարեցին, Մարտինի ուրիշ եպիսկոպոս չենք ճանչնար՝ բացի Տէր Մելիոն Թագապետանէն:

1641 թուականին, Հ. Յովհաննէս Սան Մենս Մելիոնը Հռոմ զրկեց: Հոն կարդաց Ծաւալոցին մէջ, քահանայ ձեռնադրուեցաւ եւ զրկուեցաւ իր հայրենիքը, Մարտին, ուր եռանգով աշխատեցաւ Տերօջ աղբիւրին մէջ: Ապա Պետրոս Բեռքի Հայ

կաթողիկէ հալէպցի Պատրիարքը զինքը կանչեց եւ 1708ին զինքը Մարտինի եպիսկոպոս կարգեց: Նոր հովիւը իր թեմը դարձաւ եւ սկսաւ յորդորել հայերը, որպէսզի հպատակին Առաքելապետ Պետրոսի Յաջորդին: Աստուած օրհնեց անոր ջանքերը, եւ յաղթանակով պսակեց անոր աշխատանքները: Այնպէս որ Մարտինի բոլոր հայերը ընդունեցան կաթողիկէութիւնը եւ անոր սուրբ Հաւատքը: Վեց տարի շարունակ այդ նոր թեմին ծառայելէն ետք, հակակաթողիկէները վրան յարձակեցան եւ իրեն շատ նեղութիւններ տուին: Ապա աքսորեցին զինքը Պոլիս, ուր չլթալիս ընդունեցաւ եւ 1716 թուականին վկայական մահաւամբ կնքեց իր մահականացուն:

Բ) Անոր յաջորդեց ՄԱՐՏԻՐ ՄԱՐԳԱՐԱՄԻԿԱՅԻՆ, որ 1685 թուականին ընդունեցաւ կաթողիկէ կրօնքը, եւ Հռոմի սուրբ Աթոռը կարգեց զինքը Մարտինի եպիսկոպոս, 2 Օգոստոս 1722ին: Մեռաւ 1727ին եւ թաղուեցաւ Մարտինի Ս. Գէորգ եկեղեցիին մէջ:

Գ) Անոր յաջորդեց իր եղբայրը ՄԵԼԳՈՆ ՄԱՐԳԱՐ 1738 թուականին, եւ մեռաւ Հոկտեմբեր ամսոյն 1767 թուականին:

Դ) Անոր յաջորդեց Տէր ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԱԶՊԱՋԵԱՆ, որ կարգուեցաւ Առաքելական Աթոռէն Ապրիլ ամսոյն 1768 թուականին, եւ Մարտինի մէջ տարի մը չտուրած՝ Հռոմ գնաց, եւ հոն մեռաւ 3 Ապրիլ 1773ին:

Ե) Անոր յաջորդեց Տէր ՅՈՎՍԷՓ ՊԱԼԻԹԵԱՆ 14 Նոյեմբեր 1772ին եւ մեռաւ 1773ի Օգոստոս ամսուան մէջ:

Ձ) Անոր յաջորդեց Տէր ՊԵՏՐՈՍ ԵՂԻԱԶԱՐ. Չմատու վանքին մէջ Միքայէլ Երբորդ Պատրիարքը զինքը Մարտինի եպիսկոպոս ձեռնադրեց, եւ մեռաւ 11 Յուլիս 1787ին:

Կ) Անոր յաջորդեց ՅՈՎԱԿԻՄ ԹԱԶՊԱՋԵԱՆ որ Մարտինի վրայ եպիսկոպոս եղաւ Սեպտեմբեր ամսոյն 1789 թուականին, եւ մեռաւ 27 Նոյեմբեր 1836ին:

Ը) Անոր յաջորդեց Տէր ԱՐԲԱՆԱՄ ՂԱՆՏԻԼԵԱՆ. իր նախորդը զինքը եպիսկոպոս ձեռնադրեց, եւ իրեն օգնական ըրաւ թեմի վարչութեան մէջ: Եւ նախորդին մահուանէն ետք, անոր տեղը անցաւ: Մեռաւ 28 Դեկտեմբեր 1838ին:

Թ) Անոր յաջորդեց Տէր ՅՈՎՍԷՓ ՖԱՐԱՅԵԱՆ հալէպցին, 15 Յուլիս 1838ին, բայց հրաժարեցաւ եւ հալէպ գնաց, եւ մեռաւ 17 Սեպտեմբեր 1854ին:

Ժ) Անոր յաջորդեց Տէր ԳԱՐԻԲԵԼ ՇԱՄԵԱՆ հալէպցին, Գրիգոր Ութերորդ զինքը եպիսկոպոս ձեռնադրեց 13 Մայիս 1855ին եւ մեռաւ 1863ին, ու թաղուեցաւ իր նախորդներու գերեզմանին մէջ:

ԺԱ) Անոր յաջորդեց Տէր ՄԵԼԳՈՆ ՆԱԶԱՐԵԱՆ. զինքը եպիսկոպոս ձեռնադրեց Գրիգոր Ութերորդ Պատրիարքը՝ Մարտինի վրայ, եւ թեմը վարեց 36 տարի: Իր ջանքին արդիւնքով ընդունեցաւ Մարտինի Ս. Յովսէփ եկեղեցին, օծեց զայն 14 Յունուար 1894ին եւ մեռաւ 11 Նոյեմբեր 1900ին:

ԺԲ) Գերապայծառ Մելիոն Նաղարեանի յաջորդեց Տէր ՅՈՒՍԻԿ ԿՈՒԼԵԱՆ, Չմատու աշակերտը: Տէր Յուսիկ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ 1902ի Յուլիս 6ին: Իր նշանաւոր դործերէն մին սա էր: 1903ին շատ մարտիս եկած ըլլալով ցանքը լաւ չեկաւ եւ շատ վնասուեցաւ: Թեւեւ մէկ քանակէն բնակիչները մօտակայ գիւղերը ցրուեցան իրենց կերակուր հայթայթելու: Գերապայծառ անձամբ Թեւեւ մէկ քանակէն գնաց, բոլոր բնակիչները կանչեց եւ անոնց զուգար մը տուաւ: Որով իրենց վիճակը բարւոյնացաւ եւ նեղութիւններն փարատեցաւ: Գերապայծառ Յուսիկ շատ մեծ նեղութիւն ու ցաւ կրեց երբոր կառավարութիւնը բոլոր եկեղեցական կառուածները դրակեց, որոնք դրուած էին Գրպօ. Մելիոն Նաղարեանի անունով: Կառավարութիւնը սկսաւ ծախել զանոնք, եւ զանձամբ դրամովը ուղածը ընել: Քաջարի Հովիւը ջանաց պաշտպանել իր բռնաբարութեամբ իրաւունքները, եւ դատաւ իր նախորդին օրինաւոր ժառանգ մը: Անով կրցաւ ձեռք բերել հրամանագիր մը, որով կ'ըսուէր թէ այդ կառուածները կը պատկանին Հայ աղքատներուն եւ թէ թեմին Հովիւը անոնց մատակարարն է: Այս գործին մէջ իրեն շատ օգնեց Մարտինի Հռչակաւոր փաստաբան Ճըրճըս Կէֆնտի Մանասէ Ահմարտազնոյ:

Այս գերապայծառին եւ Տէր Իսահակ Վարդապետ Հոլովոյն կը պարտին Տուլապանի տունին գնումը: 400 կարմիր ոսկի տուին եւ կցեցին զայն Ս. Յովսէփ եկեղեցիին, 1907 թուականին:

1910ին Գրպօ. Յուսիկ Կուլեան հրաժարականը ներկայացուց Պօղոս ԺԳ Թերզեան Պատրիարքին: Պատրիարքը հրաժարականը չընդունեցաւ: Բայց Գրպօ. Յուսիկ նոյն տարին գնաց Չմատու վանքը, եւ Յուլիս ամսոյն նամակ մը գրեց Սրբազան Քահանայապետին խնդրելով որ ընդունի իր հրաժարականը, պատճառ բերելով իր ծերութիւնը եւ որպէսզի ժամանակ ունենայ պատրաստուելու ճամբորդութեան որ զէպի յաւիտեանական կեանքը կը տանի: Սրբազան Քահանայապետը ընդունեցաւ:

անոր հրաժարականը: Գերազանցապես Յուսիկ մնաց Ձմառու վանքին մէջ, եւ հոն կ'աշխատէր թարգմանելով հոգեւոր գիրքեր հայերէն լեզուի: Գրպծ. Յուսիկ շատ շահեկան գիրք մը յօրինեց, որ կը ներկայացնէ մեզի Մարտինի երջանկայիշատակ եպիսկոպոսներու պատմութիւնը: Շատ մեծ գումարներ տուաւ Ձմառու վանքին եւ Մարտինի թեմին, որոնք իր յիշատակը անմահացուցին:

ԺԳ) ԳՐՊԾ. ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱԼՈՅԵԱՆ
Ծնած է Մարտին 15 Ապրիլ 1869ին: Իր սուսմանը կատարեց Ձմառու վանքին մէջ: Քահանայ ձեռնադրուելէն առաջ իր մեծաւորը գինքը Մխարանութեան քարոզիչ կարգած էր: Ձեռնադրուած է 1896ի Օդոստոս Երեւան: Վանքին մէջ տարի մը կենալէ ետք, անցած է Աղեքսանդրիա եւ ապա Գահիրէ, եւ հոն ծառայած է թեմին: Ամենապատիւ Պօղոս Սապաղեան Պատրիարքը գինքը Պոլիս կանչած է եւ իր անձնական քարտուղարը ըրած: 1910ին Տէր Իգնատիոս Վրդ. Մարտին դացած է Տէր Յակոբ Նեսիմեանին հետ. բոլոր ժողովուրդը խնդրած է որ Տէր Իգնատիոս Վրդ. Մարտինի եպիսկոպոս դրուի: 1911ին Հոկտեմբեր 22ին Հոռոմի մէջ եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ կը դառնայ իր թեմը Մարտին, հովուելով իր հօտը քաջութեամբ ու եռանդով: Գրպծ. Իգնատիոս Մարտինեան շատ հմուտ էր կրօնական գիտութիւններու: Շատ լաւ կը խօսէր հետեւեալ լեզուները. հայերէն, ֆրանսերէն, արաբերէն, թուրքերէն եւ անգլիերէն: Հմուտ էր նաեւ լատիներէնի, երբայեցերէնի եւ ասորերէնի: Գրպծ. Իգնատիոս անուանի ճարտասան էր, հիանալի ճառեր ու քարոզներ կը խօսէր օղտուելով Ս. Գրքէն եւ Ս. Հայերէնը գրութիւններէն:

ՄԱՐՏԻՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԹԵՄԸ

Մարտինի Հայ կաթողիկէ թեմը կ'ընդգրկէ Մուսուլը, Տէր-Չօրը, Պաղտատը եւ Պասրան:

Մարտին երկու հայ եկեղեցի ունի. Ս. Գէորգ եկեղեցին, որ շատ հին է եւ չին-

ուած է հինգերորդ դարուն: Երկրորդը շատ նոր է եւ օծուեցաւ 1894ին Ս. Յովսէփի անուանով:

Մարտինի հարաւակողմը գիւղ մը կայ անունը Թեյ-Երմէն. քրիստոնեաները չէնեցին դայն ՏՈՒՆԱՅՍՍՐԻ (ԳՈՉՀԱՍՍՐ) աւերակներուն վրայ: Անոր բնակիչները բոլորն ալ հայ էին, եւ ունէին եկեղեցի մը Ս. Գէորգ անունով:

Մարտինի հարաւակողմը հայերը վանք մը ունէին մարտիրոս սրբուհի Վառվառէի անունով: Ասիկա շինուած է Գրպծ. Մեղրոն Թաղապետի արգիւնքներով: Անոր ուխտադնացութեան կ'երթան ամէն տարի Մայիս ամսոյն առաջին կիրակին:

Հայերը ունին նաեւ ՄՈՒՍԸՔԻՅԷ գիւղին մէջ (Մարտինի հարաւակողմը) վանք մը՝ Ս. Յովհաննէս Մկրտիչի անունով: Գրպծ. Իգնատիոս Մարտինեան շատ խնամք տարաւ անոր վրայ, եւ անոր մէջ հին քարեր եւ գրութիւններ դտաւ, որոնք պատմական արժէք ունին:

Հայերը ունին նաեւ հասարակութիւն մը ՏԱՐԱՅԻ մէջ, 1856էն ի վեր: Հոն քահանայ մը կար, որ ժողովուրդին հոգեկան պիտոյքը կը հոգար:

ՎԵՐԱՆՇԵՂԻՐԻ մէջ ալ հայերը ունէին եկեղեցի մը Ս. Յովհաննէս Մկրտիչի անունով: Հոն բաւական մեծ հասարակութիւն ալ կար, եւ վարդապետ մը, որ անոնց հոգեկան պիտոյքը կը հոգար:

Հայերը ՏԵՐԸՔԷԻ մէջ ալ եկեղեցի մը ունէին, հասարակութիւն մըն ալ ու վարդապետ մը:

Այս բոլոր առաքելութիւնները քայքայուեցան այս օրերուն, եւ անոնցմէ բան մը չմնաց, բացի սակաւաթիւ անձերէ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ

Մարտինի եւ անոր շրջակայքին մէջ ջարդերէ առաջ հայ կաթողիկէներուն թիւը 15.000ի կը հասնէր: Ասոնք բոլորն ալ ջերմ կաթողիկէներ էին. բնաւ հայերէն չէին խօսեր: Ասոնք մեծ անուն հանցիլի իրենց քաջութեամբ, առատաձեռնութեամբ եւ ամուր հաւատքովը: Իսլամներ



ընդերենը շատ կը սիրէին ու կը յարգէին, անոնց տունները կ'երթային ու կու գային եւ անոնց հետ առուտուր կ'ընէին: Ձենք զիտեր ինչպէս խնդիրները փոխուեցան այս վերջին օրերուն, այնպէս որ քաղաքին մէջ անոնցմէ մնացած ընտանիքները մատի վրայ կը համբուրէին:

ՄԻ ՔԱՆԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Գասրոյ, Պողոս, Թաղապաղ, Քաջունի, Մարոյ, Ճընանչի, Ադամ, Թարգիսպաղ, Քանտիր, Նամէ, Գարաղիուան, Այն-մըլք, Պաթանէ, Շալլըմէ, Չանտըրի, Թամար, Պանաղըր, Շատ, Խոճա Եռնան, Վախիւր, Հանջոյ, Մըրջոյ, Ճարրոյ, Թարգի, Ահմարանի, եւն. եւն.: Այս ընտանիքներէն ոմանք 200 անգամ կը համբուրէին:

Ասոնք բոլորը աքսորուեցան իրենց ծըննդավայրէն ու քուեցան, տարադրուեցան հեղ ոչխարներու նման: Սպաննուեցան առանց յանցանքի եւ պատճառի. անոնցմէ ոչ մէկը մահունէ ազատեցաւ, բացի փախչողէն ու պահոււորողէն:

ԳՐԻԳՈՐ ԺՁ.Ի ԳՈՎԵՍՏԸ

Պէտք է փակենք այս գլուխը այն պարբերութեամբ, որ Գրիգոր ԺՁ. Սրբազան Քահանայապետը զրեց իր չըջաբերակալին մէջ 1854 թուականին, ըսելով. «Հայ ազգը նշանաւոր է իր քաջութեամբ եւ անունով: Գովեստի արժանի է իր կրօնասիրութեան եւ հաւատքի ամբողջեանը համար: Հայ ազգը կրօնքի տեսակէտով անմըցելի է արեւելեան բոլոր ազգերուն մէջ»:

Բ.

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԿՈՏՈՐԱԾԸ

ԳՐՊԾ. ՄԱԼՈՅԵԱՆ ՄՏԱՀՈԳ

Մայիս ամիսը անցաւ, եւ Գրպծ. Իգնատիոս շատ մտահոգ էր, նեղուած, տխուր եւ մտածկոտ: Ան գիշերները անքուն կ'անցընէր այդ վարանոտ վիճակին մէջ:

Յունիս 1ին, Երեքշաբթի օրը, առտուան զէմ, Գրպծ. Իգնատիոս Մարոյեան գնաց Կոտրիներու եկեղեցին իր շատ մտերիմ Գրպծ. Ճըպրայէլ Թափունիի այցելութեան: Հոն կանչեց նաեւ Գոմինիկեան երեք Հայրերը, յայտնեց ամէնուն իր սէրը եւ սրտին մէջ թաղնուած դաղանիքները: Բաւական խօսելէ ետք պարզեց անոնց իր մտահոգութիւնները:

ԳՐՊԾ. ՄԱԼՈՅԵԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻ ՆԱՄԱԿԸ

Եւ ապա յանձնեց Գրպծ. Թափունիին իր սիրելի ժողովուրդէն մնացածներուն խնամքը, յետոյ կարդաց անոնց առջեւ իր հրաժեշտի նամակը (էջ 135), կարգաւորեց իր խնամքը:

Իմանալուն՝ ծաղեց զայն եւ յանձնեց իր բարեկամին ըսելով. «Քովդ պահէ այս աւանդը, խնամք տար հօտիս վրայ, որքան որ կրնաս: Ինծմէ ետք անոր խնամակալը դու ես, մինչեւ որ մեծերը այլապէս կարգադրեն»: Գրպծ. Ճըպրայէլ ու Գոմինիկեան Հայրերը եւ միւս վարդապետները սկսան զինքը մխիթարել ու քաջալերել, եւ փրկութեան յոյսեր ներշնչել: Այն ատեն Երանաշնորհ Գերապայծառը ըսաւ անոնց. «Ես ապահով եմ, որ սիրելի ժողովուրդիս հետ տանջանքի եւ մահուան պիտի դատապարտուիմ: Ես օրէ օր ժողովուրդիս հետ կալանաւորութիւն կը սպասեմ: Ասիկա անհրաժեշտ է որ պատահի: Ուրեմն, ես այսօր Ձեզի եկայ հրաժեշտի ողջոյնս տալու եւ Ձեզ Աստուծոյ յանձնելու: Ինծի համար աղօթեցէք: Ես կը համարիմ որ ասիկա վերջին անգամն ըլլայ, որ Ձեզ կը տեսնեմ: Մնաք բարո՞վ, սիրելի բարեկամներ: Ինչքա՞նք բարո՞վ»: Այս վայրկեանին

ներկաները տխրեցան, եւ ոմանց աչքերէն սկսան արցունքներ վազել: Վեհանձն Եպիսկոպոսը անոնց պատասխանեց եւ ըսաւ. «Աստուած այսօրուան համար է որ թողուց որ ապրինք, ինքը միայն կրնայ մեզ քաջալերել, զօրացնել ու յաղթութիւն շնորհել»: Ապա սիրելի այցելուներ դարձաւ իր տեղը, եւ Գրպօ. Թափուներին ու Հայրերուն սրտին մէջ թողուց զեղեցիկ ու քաղցր յիշատակ մը, որ իրենց բոլոր կեանքին մէջ պիտի չմոռնան:

ԱՀԱՒՈՐ ՅՈՒՆԻՍ 3

Յունիս Յիւ, Մարմնոյ եւ Արեան Տօնին օրը, երեկոյեան դէմ, Մարտին հասան Մամուռ հաւ իր երկու բարեկամները, Քարտուղարն ու Հարունը, թշուառութեանց և ցաւալի արարքներուն առաջնորդը. եւ ուղղակի դացին կառավարատուն: Անոնք կը կարծէին թէ շատ դժուար պիտի ըլլայ Վալիին բոլոր հրամանները դործադրել: Չէին գիտեր որ մատնութեան ճամբաները պատրաստ են, չարութեան դռներն ալ բաց: Պատահամբ Մարտինի Հըլմի Պէլի կուսակալը բացակայ էր: Մամուռ հըլմի Պէլի բացակայութենէն օգտուելով՝ ուղածը ըրաւ: Անոնք հաղիւ թէ ոտքերնին կառավարատուն գրին՝ խարդախ նամակներ սկսան հասնիլ մէկը միւսին ետեւէն: Սուտ վկայութիւններ կը տեղային: Այլեւս ամէն ոք թուղթին վրայ իր չարութեան հնարածները կը գրէր եւ դայն Յանձնախումբին կը ներկայացնէր ըսելով. «Ըսածներս փաստելու համար վկաներ ալ կրնամ բերել»: Այլեւս ամէն ոք իր չարութեան համեմատ անուններ կը գրէր եւ դանոնք երեք անձերէ բաղկացած Յանձնախումբին կը յանձնէր ըսելով. «Եթէ ըսածներուս ապացոյցներ ուզէք, չիտակ կամ խարդախ վկաներ ալ բերելու պատրաստ եմ»:

«Վասնզի ատելութիւնը ամէն չարիք կը հնարէ, իսկ եղբայրսիրութիւնը պակասութիւններն ալ կը ծածկէ»:

Այս թշուառական Յանձնախումբը փութով զինուորներ զրկեց հայերու եկեղեցին

ԽԱՄՍԻՆԻ զինուորներուն հետ: Անոնք եկան եկեղեցիին վրայ յարձակեցան, Գերապաճառ Իգնատիոսը կալանաւորեցին, հետն ալ բռնեցին Հ. Պողոս Վրդ. Գառապարեան Միլիթարեան կրօնաւորը, եւ տարին դանոնք կառավարատուն:

ԿԸ ԲՈՆԵՆ ՀԱՅ ԶՈՋԵՐԸ

Ապա քաղաքին մէջ խուժը մը զինուորներ ցրուեցին, որպէսզի հայոց մեծամեծները բռնեն եւ այդ նենգաւոր հաւաքոյթին բերեն: Բռնեցին 27 հոգի, որոնց մէջ կային ՆԱՌԻՄ ՃԸՆՆԱՆՋԻ, ԻՍԳԵՆՏԵՐ ԱՏԱՄ, եւ անոր որդիները ՇԱՖԻԳ ՈՒՂԸՍՈՅ, եւ ԱՆԹՈՆԻ ԳԱՍՊՈՅ, եւ ԻՍԳԵՆՏԵՐ ՈՒ ՖԱԹԻՄԱՆԻ ԳԱՍՊՈՅ, եւ ՃԸՊՐԱՅԷԼ ԱՅՆՄԸԼԻ, եւ ՖԱՐԱՆՍԻՍ ՏՈՂԱՄԱԳ եւ անոր որդին ԵՈՒՍԸՖ, եւ ՍԱԻՏ ԸՇՇՈՅ, եւ ՀԱՆՆԱ ՄԱԽՈՒԼԷ, եւ անոր եղբայրը ՄԱՆՍՈՒՐ եւ հօրեղբայրը ՊՕՂՈՍ եւ ԵՈՒՍՈՒՖ ԹԱՐԶԻ, եւ ԱՊՏՈՒԼԱՄԱՍԻ ՀԱՏԱՄ եւ անոր որդին ԱՏԱՄ, եւ ՍԱԼԻՄ ԸՊՐԱՆԻ:

Գրիստոնեաները սկսան մտահոգուիլ եւ հազար ու մէկ հաշիւ ընել այս բոլորին պատճառը դռներու համար: Իսկ անօրէն խալմաները կ'ըսէին թէ զրեւնք հարցուփորձ պիտի ընեն եւ վաղը տուններնին պիտի ճամբեն:

ԲԱՆՏԱՐԿՈՒՄ 662 ԳՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

Յունիս 4ին, Ուրբաթ օրը, առտու կանուխ, զինուորները ամէն կողմ ցրուեցան եւ մուկներով ձայնեց. «Ամէն ոք ներս, դուրս ելողը պիտի սպաննուի»: Արեւածագին, զինուորները եւ Խամսինի զինուորները մարտի պէս յարձակեցան քրիստոնեայ տուններու եւ թաղերու վրայ, եւ սկսան բռնել անխորհրդ հարուստներ, մեծամեծներ, բաւ է որ քրիստոնեայ ըլլային: Բռնեցին 662 հոգի, եւ թխեցին դանոնք մաս մը բանտին մէջ, մնացած մասն ալ զօրանոցին մէջ. երկու տեղերն ալ ծայրէ ծայր լեցուեցան: Ատիկա կարծես չէր բաւեր, դաներն ալ այնպէս մը ամուր

դոցեցին, ներսը խեղդուելու համար: Ծերունի ԵՈՒՍՈՒՖ ԶԸՐՊԱԳԱ շատ գէշ ըլլալուն համար շուտով մարեցաւ: Եուսուֆի որդին Իպրահիմ կանչեց զանապանը, անոր ձեռքը 60 դահեկան դրաւ եւ հրաման առաւ որ դրան քովը տանի զինքը:

12 ՀԱՅ ԵՒ 2 ԱՍՈՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Կէսօրէն ետք բռնեցին 12 հայ վարդապետներ: Յարձակեցան նաեւ ՏԵՐ ՌԱՓԱՅԷԼ ՊԱՐՏԱՆԻ վարդապետի տանը վրայ, վայրագութեամբ քաջեցին դայն ու տարին կառավարատուն: Անոր հետ բռնեցին նաեւ ասորի կաթողիկէ վարդապետներ ՏԵՐ ՊԸԹՐԸՍ ԻՍԱ ԵՒ ՏԵՐ ԵՈՒՍԸՖ ՄԸՄԱՐՊԱՇԻ:

Զինուորները Յունիս 5ին, Շաբաթ օրն ալ, շարունակեցին իրենց դործը. կալանաւորեցին շուրջ 200 հոգի, առժամապէս տարին դանոնք ու դրին Փրանկիսկեան մայրապետներու վանքին մէջ, որպէսզի երեկոյեան դէմ ամէնքը միասին տանին ու Լանտ թխեն իրարու վրայ:

ԳՐՊԾ. ՄԱԼՈՅԵԱՆ ԿԸ ԴԱՏՈՒԻ

Մամուռ հաւ իր երկու բարեկամները հաղիւ կառավարատուն հասան, առեանը կաղմուեցաւ: Հաւաքեցին չարագործները եւ զրկեցին դանոնք, որպէսզի երթան եւ Գրպօ. Մալոյեան հայոց Արքեպիսկոպոսը դատարան բերեն: Գերապաճառ անմիջապէս ելաւ եւ զինուորներուն հետեւեցաւ: Հաղիւ թէ դահլիճը մտաւ, դատարանները աթոռներու վրայ նստած. իրեն խիստ խիստ կը նայէին, եւ նստելու տեղ ալ չհրամցուցին, ինչպէս որ կ'ընէին նախորդ անգամները: Գերապաճառը այն ատեն իմացաւ անոնց չարութիւնն ու նենգամտութիւնը. կեցաւ լուռ ու մուկ, առանց բան մը ըսելու: Սկսան իրեն հարցումներ ուղղել իրենց երեւակայած հրացաններու, թնդանոթներու եւ զէնքերու մասին: Անոնք մէջբերին վաւերաթուղթեր, որոնց վրայ կը հիմնէին իրենց խաբէական զրպարտութիւնները: Գերապաճառը

ծառը բացէ ի բաց մերժեց անոնց ըսածները եւ ըսաւ. «Ինչ որ լսած էք վրաս ու իմ հասարակութեան վրայ՝ բոլորովին անհիմն է: Եթէ անոնց հաւատք ընծայէք, պիտի պատահի մեզի, ինչ որ ուրիշներուն արդէն իսկ պատահեցաւ: Ապա քէ ոչ կարծեմ քէ դուք մեր չարիքը կ'ուզէք, եւ անոնց որեւէ պատմաւի: Ատ ի՞նչ տարօրինակ բան է»:

Անոնք պնդեցին, որպէսզի Եպիսկոպոսը թնդանոթները հանէ եւ իրենց յանձնէ: Եպիսկոպոսը պատասխանեց եւ ըսաւ. «Ես ըսի եւ նորէն կը կրկնեմ. ահաւասիկ եկեղեցին, առաջնորդարանը եւ փառանքներու սենեակները, և մեր հասարակութեան մեծերուն տունները, կրցածուդ չափ քրքրեցէք. եթէ մեր երեսակայածէն բան մը գտնէք, զիս ու հասարակութիւնս որքան որ ուզէք տանջեցէք. ապա քէ ոչ, ինչո՞ւ ստախոսութիւններ կ'ընէք եւ նշմարտութեան դէմ կը կոտիք. քանի որ մեր մէջ որեւէ յանցանք չէք գտներ, ոչ մեծ եւ ոչ պզտիկ»:

Երբոր քաջարի Եպիսկոպոսը իր խօսքերը վերջացուց, ներկաները կառուցան. սկսան զեղնիլ, դոյն նետել եւ ըսել.

— Բայց քովդ զէնքեր կան: Դուք կ'ուզէք պետութեան դէմ ելլել ու կոռուիլ: Դուն դեռ ժխտէ, եւ պիտի տեսնես քու պատիժդ, եւ քու հասարակութեանդ պատիժն ալ քու առջեւդ:

Եպիսկոպոսը պատասխան տուաւ եւ ըսաւ. «Ձեր ըսածը բոլորովին սուտ է. ես պետութեան դէմ երբեք չեմ գործած, այլ ընդհակառակն, մինչեւ հիմա գայն պաշտպանեցի, եւ պիտի պաշտպանեմ աւելի իրաւունքները՝ ծածուկ քէ յայտնի, եւ անոր բարիքը կրցածու չափ պիտի պաշտպանեմ, որովհետեւ ես անոր հպատակն եմ, եւ անոր ազնուութիւնն ստացայ ՇԱՀԱԿԱՆ ՖԱՐՄԱՆԸ եւ ՕՍՄԱՆԵԱՆ ՇՔԱՆՇԱՆԸ»:

Մամուռ հաւ Եպիսկոպոսին. «Ո՛վ մարդ, գիտցիր որ քու հասարակութեանդ վկայութեանը համեմատ՝ զէնքերով լեցուն երկու անտուկ բերած ես». ապա իր դրօշ պանէն ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ մը հանեց եւ

սկսաւ անոր մէջէն կարգալ, թէ Սարգիս Եպիսկոպոսին սենեակը բերած է երկու սնունդ, եւ թէ ազգին մեծերը ներկայ էին, եւ թէ առին զանոնք եւ չնորհաւարութիւն յայտնեցին Սարգիսին, եւ դովեցին անոր մեծ հոգածութիւնը: Լմնաւորեն՝ անոր կարգաց բռնադիր հանրադրութեան ստորագիր վկաներու անունները, որոնք հետեւեալներն էին. ՏԵՐՎԻՇ ԽԸՆՏԸՐ ԷՖԵՆՏԻՒ ՈՐԴԻՆ՝ ԹԵՂԵՐԱՖԵՆԻ ՄԵՆՍԻՐԸ, ԱՊՏՈՒԼՐԱՆՄԱՆ ԷԼ ԳԱՌԱՍ, ՄԱՍՏՈՒՆ ԱՊՏԱԼՈՅ, ՆԱՃԻՄ՝ Մշակութեան Դրամատան Մուտիքը, եւ ուրիշներ:

Վեհօղի Գերապայծառը զարմացաւ եւ ներկաներուն ըսաւ. «Սարգիսը առջեւս բերէ՛. ապա քէ ոչ՝ այս հանրագրութիւնը սուտ է, ձեր ըսածներն ալ տարակուսական»: Անոնք Եպիսկոպոսի պաշտպանողականին ականջ չդրին. որովհետեւ Սարգիսը արդէն իսկ մէջտեղէն վերցուցած էին ու սպանած էին: Անոնք սկսան Եպիսկոպոսին պատասխանը քննել, անոր մէջ սըլսալ մը գտնելու համար, որպէսզի բռնեն զինքը եւ իրմէ ոխերնին հանեն: Ապա կուսակալին փոխանորդ Խալիլ Ատիպը ըսաւ. «Գիտցիր որ երբոր Սարգիս քովդ եկաւ գէնֆերով բեռնաւորուած, քովդ տեսաւ ազգիդ դաւանան մեծամեծները, Նաւալ ձընմանջի, Իսֆենտէր Ատամ, Անթուր Գասպոյ եւ իր եղբայրը Մալալա: Անկից երկու սնունդներ ստացաւ, եւ ձեզմէ իւրաքանչիւրը երկու ոսկի վնարեց: Ուրեմն, ինչո՞ւ խօսքը կը փոխես եւ մեզմէ նշմարութիւնը կը ծածկես»:

Անմեղ Եպիսկոպոսը պատասխանեց եւ ըսաւ. «Տարօրինակ բան, ձեզի ըսի որ կը խաբուիք, ըսածնիդ սխալ է եւ երբեք հիմ չունի»:

Մամուռն քիչ մը լուռ կեցաւ եւ ապա շարունակեց ամբաստանել Եպիսկոպոսը՝ թէ ֆէտայիներու ընկերութեան զուլան ու առաջնորդն էր, եւ թէ կը քաջալերէր ամէնքը, որպէսզի անոր մէջ գրուին, եւ թէ կը պաշտպանէր անոր իրաւունքները եւ կը յորդորէր ժողովուրդը, որպէսզի զէնքեր զենն եւ ի հարկին կուրին:

Հաւատարիմ Եպիսկոպոսը ցոյց տուաւ

թէ ինքը ամենեւին հակառակ էր այդ ընկերութեան, թէ զաղտնի եւ թէ յայտնի: Ապա Մամուռն յիշեցուց այն նամակը, որ գտնուած էր Տիգրանակերտի Անդրէաս հայ կաթողիկէ Եպիսկոպոսի թուղթերուն մէջ, ուր Գրպոյ. Իգնատիոսը յայտնաբերէր ցոյց կու տայ թէ ինքը բոլորովին հակառակ է այդ ընկերութեան:

ՄԱՍՏՈՒՆԻՆ ԸՐԱԾ ԼՐԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եւ սակայն Եպիսկոպոսին ակնյայտնի ապացոյցները չկրցան համոզել ներկաները, որպէսզի իրենց չարութենէն ետ կենան: Որովհետեւ անպատճառ զինքը ըստպանել կ'ուզէին, եւ անոր դէմ ատելութեամբ լեցուած էին: Մամուռն յանկարծակի ոտքի ելաւ, ձեռքերը սօթթեց ու պատրաստուեցաւ Եպիսկոպոսին զարնելու: Ապա քովի զինուորներուն ըսաւ. «Զինքը գետին տարածեցէ՛ք»: Զինուորները զետին տարածեցին Եպիսկոպոսը, եւ Մամուռն զաւազանը առաւ, որպէսզի զարնէ:

Քաջարի Եպիսկոպոսը Մամուռնին ըսաւ. «Տեղդ կեցիր ու չափեղ մի՛ ելլեր. որովհետեւ իրաւունք չունիս այնպիսի բռնամարտներ ընելու անոր՝ որուն Բարձրագոյն Կառավարութիւնը Շահակաճ փէրման եւ Օսմանեան շխմշան տուաւ. եւ զինքը իբր մեծ մարդ անցնցաւ»:

Մամուռն ինդալով ըսաւ. «Այսօր սուրբ կառավարութեան տեղն է, փէրմանդ գործի չի գար, նշաններդ ալ անգոր են»:

ԻԳՆԱՏԻՈՍԻ ԴԱՒԱՆԱՆՔԸ

Այն ատեն ներկաներէն մէկը խօսքը ընդհատեց եւ Եպիսկոպոսին ըսաւ. «Հարկ ալ. քու բերած պատճառաւորներդ անգոր են: Սակայն որովհետեւ քեզ կը սիրեմք եւ վրադ կը գրամք, քեզի խրատ մը պիտի տամ. եթէ ԸՆԵՍ ԶԱՅՆ, ՄԱՀՈՒԸՆԷ ՊԻՏԻ ԱԶԱՏԻՍ, ԵՒ ՊԻՏԻ ՍԻՐՈՒԻՍ ՈՒ ՄԷՆԷՆ ՊԻՏԻ ՅԱՐԳՈՒԻՍ: ԿԸ ԽՐԱՏԵՄՔԵՁ, ՈՐ ԻՍԼԱՄ ԸԼԼԱՍ ԵՒ ԸՍԵՍ «Լ

ԻԼԱՆ ԻԼԼԱ ԱԼԼԱՆ, ՈՒԱ ՄՈՒՀԱՄՄԱՏ ՌԱՍՈՒԼ ԱԼԼԱՆ»:

Եպիսկոպոսը անվեհեր պատասխանեց. «Ե՛ս իսլամ ըլլամ, Աստուած չընէ որ Կրօնքս ուրանամ: Աստուած չընէ որ ուրանամ ԻՄ ՓՐԿԻԶՍ, միքէ կը վայելէ՞ ինձի, եւ որ կըքուեցայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, սնայ անոր վարդապետութեամբ, գորացայ անոր նշմարտութիւններով, եւ մինչեւ իսկ անարժանաբար անոր հովիւներէն եղայ: Իմ արիւնս իմ Հաւատքիս համար գոհելը սրտիս ամէնէն անոյշ բանն է: Որովհետեւ եւ վստահ եմ, որ երբ տանջուիմ Անոր համար որ ինձի համար մեռաւ, պիտի ըլլամ այն բախտաւոր երջանիկներէն, եւ պիտի տեսնեմ Տէրս եւ Աստուածս երկինքի բարձունքներուն մէջ: ԴՈՒՔ ՈՐՔԱՆ ՈՒԶԷՔ ԶԻՍ ԾԵԾԵՑԷՔ, ՍՈՒՐՈՎ, ԴԱՇՈՅՆՈՎ ՈՒ ԶԵՆՔԵՐՈՎ ԶԻՍ ԿՏՈՐ ԿՏՈՐ ԱԼ ԸՐԷՔ, ԵՐԲԵՔ ԵՍ ԻՄ ԿՐՕՆՔԱՍ ՊԻՏԻ ԶՈՒՐԱՆԱՄ»:

ԳՐՊԾ. ՄԱԼՈՅԵԱՆԸ ԿԸ ԾԵԾԵՆ

Ներկաները կատգեցան ու բարկացայտ աչքերով Եպիսկոպոսը կը դիտէին: Իսկ անոնցմէ մէկը անոր ապտակ մը իջեցուց եւ ըսաւ. «Մեր կրօնքը այսպէս կ'անարդէս այս պաշտօնական վայրին մէջ: Աստուծոյ վրայ կ'երգնուի, քեզ պիտի տանուածոյ վրայ կ'երգնուի, քեզ պիտի սպաննեմ»:

Եպիսկոպոսը հառաչանք մը արձակեց եւ ըսաւ. «Մարմինիս մէջ կը կրեմ հարուածներու ահուկի ցաւերը, իսկ հոգիիս մէջ սիրով կը համբերեմ Աստուծոյ համար»: (Մակար. Երկրորդ Գիրք, Գլ. 2, 30):

Գիշեր ատեն եկաւ ԶԱԼՖՈՅ ՊԱՏԻՍԻՒՈՐԴԻՆ՝ ՆՈՒՐԻ ՎԵՐԸ յիշատակուած հանդիտարահին մէջ, ուր հեղահամբոյր Հոգիտարած էր: Գետին բոց գայն, վեր տարուած էր: Եպիսկոպոսը անցուց, եւ 12 փալախան անոր ոտքերուն անցուց, եւ հարուած գարկաւ: Իսկ Գերապայծառը ամէն հարուածին բարձրաձայն կ'աղաղակէր. «Տէր, ողորմէ ինձի»: Ապա հրամայեցին իրեն որ ելլէ եւ երթայ իրեն նշանակուած տեղը: Գերապայծառը փորձեց,

բայց չկրցաւ քաշել: Ապա այդ ամբարիշտները զինքը ոտքերէն քաշեցին այդ քարուտ դետին վրայ անխնայ քաշքռատութեամբ: Իր սուրբ գլուխը վերաւորուեցաւ, իր ոսկորները քաքալուեցան եւ ըսկրաւ բարձրաձայն ըսել. «Ով որ ձայնս կը լսէ, քող ինձի վերջին արձակումը տայ»:

ԱՐՁԱԿՈՒՄԸ

Հ. Պօղոս Գասպարեան Մխիթարեան վրդ. լսեց անոր ձայնը, որովհետեւ մօտ կեցած էր վարի պատուհանին. անոր վրայ արձակումի բանաձեւը կարգաց:

Իսկ խորամանկները թողուցին Եպիսկոպոսը դետին ինկած, անշարժ ու կիսա-մեռ, որպէսզի իրեն համար պատրաստեն տանջանքի դործիքները: Ապա փութով ետան Եպիսկոպոսին ոտքերու եղունգները թոփաշեցին, իսկ ձեռքերու եղունգները թոփաշեցին, որպէսզի մէկը չտեսնէ այդ բարդուցին, որպէսզի մէկը չտեսնէ մնաց Յունիս բարոսութիւնը: Եւ այնպէս մնաց Յունիս ներք կը նեղէին զինքը ու կը չարաբէին: Գերապայծառը կը տեսնէր իր հասարակութեան զաւակները, որոնք կը տանջուէին. կը լսէր անոնց լացն ու կոծը եւ կը սկսէր քաջալերել զանոնք. որպէսզի այդ անորը համբերութեամբ կրէին ի սէր Աստուծոյ, որ իրենց համար զոհեց իր անդին կեանքը՝ խաչափայտին վրայ:

ԱՆՀՆԱՐԻՆ ՆԱԽԱՏԻՆՔՆԵՐ

Եւ լսեցինք այս երջանկայիշատակ Եպիսկոպոսի մասին, թէ երբոր չարագործները իրեն դէմ կը չարախօսէին, ու երեսը կը թքնէին զինքը նախատելով ու զըլուխին չարութելով, Գերապայծառը երբեք չէր խոսկեր: Մենք ստոյգ աղբիւրներէ իմացանք թէ չարագործներէն մէկը ըսաւ իրեն. «Յիշէ՛ երբոր կառավարութեան դէմ ելար այդ քրիստոնէական խընդրի մասին. երբոր կառավարութիւնը կ'ուզէր որ քրիստոնէական կրօնքը ուրանաւ ու մահմետական դառնաւ: Յիշէ՛

երբոր ձեռք հեծած, վսեմ վսեմ կառավարատուն կ'երթայիր: Հիմա ժամանակը եկաւ որ պարծենաւ եւ ուրիշ: Քու եւ հասարակութեանդ օրերը համբուած են»:

Եւանդուն Եպիսկոպոսը այս սեւ օրերը բանտին մէջ անցուց բազմապատիւ եւ աչքերը դէպի երկինք յառած՝ կ'աղօթէր ու կը խնդրէր Աստուծոյ, որպէսզի իրեն ոյժ տայ եւ զօրաւոր լի լինի իրեն եւ իր հասարակութեան: Կարծես թէ հերոս Սեբաստիանոսն ըլլար որ կ'ըսէր. «Աստուած իմ, քու թոյլտուութեամբդ կ'ըլլայ ամէն բան, քու զօրութեամբդ ալ պիտի վերջանայ: Աստուած իմ, ցոյց տուր քու կարողութիւնդ, որովհետեւ մենք անոր կը կարօտինք: Ողորմէ մեզի քու զօրութեամբդ այս տխուր ժամանակներուն, որովհետեւ ողորմելի ենք եւ քու օգնութեանդ կը կարօտինք: Տո՛ւր որ մենք քու սուրբ հաւատքիդ ախոյեաններն ըլլանք, եւ անոր իրաւունքները պաշտպանենք: Աստուած իմ, տո՛ւր որ ես, քու ողորմելի ծառայ, կարենամ քու յաղթող խաչիդ զօրութիւնը հռչակել, որպէսզի իմ ու ժողովուրդիս քովէն փախչին հեռանան անիծուած չար հոգիները դժոխային անդունդներուն մէջ: Մեզի քաջութիւն տուր եւ փրկութիւն, եւ արժանի ըրէ, որպէսզի քու երեսդ տեսնենք, որովհետեւ դու Ամենակարող ես:

ՄՐՏԱՃՄԼԻԿ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Եւ դեռ ցաւալին այն է, որ այս Եպիսկոպոսին ծերունի մայրը կը փափաքէր զինքը տեսնել եւ չէին ձգեր: Սակայն Եպիսկոպոսին եւ իր հասարակութեան տարագրուելու եւ քշուելու օրը, Գրպօ. Մարոյեանին մայրը կրցաւ ձեռք բերել իր որդին վերջին անգամ տեսնելու հրամանը: Ծերունի մայրը եկաւ, մարդ զրկեց ու կանչել տուաւ որդին, վերջին անգամ տեսնելու: Գերապայծառը իր մօրը հետ շատ անոյշ ու զոգարիկ կերպով խօսեցաւ եւ ըսաւ. «Մայրիկ, հաւատա՛ ինձի, որ իմ Աստուած Փրկիչս այս ժամուս համար պահած է զիս: Հետեւաբար կը խնդրեմ քեզմէ որ չախրիս ու չյուսահատիս, չը-

վախնաս ու չտրամուս: Գիտցի՛ր որ վաղը առաւոյ իմ ժողովուրդիս հետ Տիգրանա-կերտի ճամբուն վրայ պիտի ըլլանք, եւ չեմ գիտեր թէ ինչ պիտի պատահի ինձի եւ իրենց: Սակայն ես պատրաստ եմ տալու իմ արիւնս Անոր համար, որ զիս փրկէ: Եկո՛ւր, մայրիկ, եկո՛ւր, որ վերջին անգամ քեզ համբուրեմ եւ վերջին ողջոյն տամ: Ինձի համար աղօթէ՛, եւ դարձի՛ր քու տունդ խաղաղութեամբ: Մայրիկ, կը յանձնարարեմ քեզի, որ խրատես ու յորդորես բոլոր աղաւակներս, որպէսզի ինձի նմանին, եւ հաստատուն մնան իրենց կրօնքին մէջ: Թշնամիներու յարձակումներէն թող չվախնան, եւ անոնց սուս խոստումներուն թող չհաւատան»: Այս ըսելով մօր ու որդիին աչքերը ջերմ արցունքներով ծովացան, և ցաւով ու տրտմութեամբ իրարու հրաժեշտի ողջոյնը տուին: Գերապայծառը իր մօրը յանձնարարեց որ փութով իրեն լայն կօշիկ մը զրկէ, որպէսզի ճամբուն հագուելիք մը ունենայ: Գերապայծառը չէր կրնար մօրը բացատրել սաստիկ ծեծէն առաջ եկած ուռեցքը, որպէսզի չըլլայ թէ մօրը սրտին վէրքը աւելի բանար, եւ ցաւով ու տրտմութեամբ դեռ աւելի լեցնէր:

ԵՐԹԱՆՔ, ՍԻՐԵԼԻՍ...

Սիրելիս, եկո՛ւր կիներու եւ աղջիկներու խումբերուն խառնուինք, տեսնենք թէ անոնք ո՛ւր կ'երթան: Կօշիկին մենք ալ մեր անութիւն տակ առնենք իրենց պէս, հետեւինք քիչ մըն ալ կերակուր առնենք, որովհետեւ կը յուսանք տեսնել մեր թրջ ուսու սիրելիները, եւ եթէ կարելի ըլլայ՝ բանտին մէջ խօսինք անոնց հետ, մասնակցինք անոնց հոգեւորուն, թեթեւցնենք դանդաղ ու կերակրենք մեր հետ տարած կերակուրներով, անօթութիւնն իսկ անցնենք եւ ետ դառնանք:

Երթանք քաղաքին արեւելակողմը, ուր կը գտնուին բանտն ու տանջանքի վայրը: Ուր կայ նաեւ կառավարիչին եւ իր օգնականներուն տեղը, ուր կան չարապործ-

ները եւ անոնց զլխաւորները: Զօրանոց երթանք, որպէսզի տեսնենք թէ ինչ պատահեցաւ մեր հայրերուն, եղբայրներուն, բարեկամներուն եւ աղջիկն: Չվախնանք ճամբուն վրայ մեր տեսածէն ու լսածէն, որովհետեւ անոնց տեսութեան երթալը օգտակար է մեզի, եւ մեր սիրելիներուն ալ մխիթարական: Լաւ չէ որ զիրենք թողունք եւ տուններն դառնանք, պահուր տինք, նոյն իսկ եթէ բռնեն մեզ եւ անոնց պէս տանջեն: Որովհետեւ անոնք մեր աղաւակներն են, մեր մարմինն են մեր արիւնէն ու մեզի հաւատակից: Անոնց հետ մենք կերած ենք ու խմած, ելած ենք ու մտած: Ուրեմն, հարկ է որ անոնց նեղութիւններուն ու տանջանքներուն մասնակից ըլլանք, ինչպէս ծնողատէր զաւակներ:

Զգոյշ ըլլանք, չըլլայ թէ որդիական սիրոյն մէջ պակսինք, ու անոնց մեր օգնութիւնը զլանանք: Մեր շահը անոնց շահէն չզատենք, որովհետեւ ատիկա վեհաճան դաւալի մը գործ չէ: Ապա ուրեմն, հաստատուինք մեր առաջադրութիւններուն մէջ, քաջ ըլլանք, եւ անոնց քով փութով երթանք:

Ո՛վ քրիստոնեայ կիներ, ձեր երեսները լաւ մը ծածկեցէք, եւ զգոյշ եղէք, չըլլայ թէ զանոնք բանաք: Խորհեցէք ձեր զլուխները եւ շուտ քալեցէք, որովհետեւ որոշեցինք կտրելու թշնամիներուն շարքերը, մինչեւ որ հասնինք մեր որոշած տեղերը. ապա թէ ոչ, մեր չսպասած բաները պիտի տեսնենք: Ահա ես կը տեսնեմ զինուորները, որ կ'երթան ու կու գան եւ կը թալանեն: Անոնք տեսածն ինչ կը բռնեն ու դերիկ պէս կը տանին լուս ու մուկ: Ո՛ւր կը տանին այդ երկուստեքը. դէպի զօրանոց, մեր սիրելիներուն քով: Ահաւասիկ հոն հասանք: Կը դարձանամ որ պատուհանները դոց են, եւ սակայն զօրանոցը խեղդուելու չափ մարդերով լեցուն է: Ի՞նչ է այդ տխուր տեղը մարդիկ բերելը: Ես կը լսեմ աղմուկ եւ ողբի ձայներ, կը դգամ որ ահ ու դող տիրած է ամէնուն սրտին մէջ: Անոնք այնքան թխմուած են, որ քալելու կամ չարժելու տեղ չունին, կարծես թէ ամէ-

նուն ձեռքին մէջ բաժակ մը ըլլար եւ ուղէր խմել: Ահա քահանաները անոնց մէջ կը շրջին, անոնց զլուխներուն վրայ հըրեշտակներու նման կը թռչտին, զանոնք կը քաջալերեն, կրօնքի մէջ կը հաստատեն, եւ կը յորդորեն զիրենք ընդունելու համար արհաւիրքներն ու մահը՝ կրօնքի այս սրբազան պատերազմին մէջ: Կը տեսնեմ որ անոնք մէկիկ մէկիկ քահանաներու քով կու գան, մեղքերնին կը խոստովանին, իրենց գործած մեղքերուն վրայ կը ցաւին, եւ կը խնդրեն արձակումը, ներումը, աղօթքն ու օրհնութիւնը:

Ահա դուռ մը կը բացուի և անկից դուրս կը հանեն պատուական ալեհեր ծերունի մը. արդեօք ո՛ւր կը տանին զանիկա. Պիղատոսի եւ Հերովդէսի դատարանին:

— Ըսէ՛, ո՛վ քրիստոնեայ, ո՛ւր են զէնքերը, ըսէ՛, դաւաճա՛ն, ո՛ւր են թնդանութիւնն ու ումբերը:

— Ի՞նչ զէնքեր, ի՞նչ թնդանութիւն, ես այսպիսի բաներէ լուր չունիմ, ամենեւին անհիմն է, կեղծաւորութիւն է ձեր ըրածը. յայտնի ըսէք որ կ'ուղենք քեզ սպաննել:

— Քանի որ այսպէս է, պէտք է որ դու մար մը տաս ի պատիժ քու յանդիմութեանդ ու պատասխանիդ, եւ կամ թէ կրօնդ ուրացիր:

— Աստուած չընէ որ կրօնքս ուրանամ, նոյն իսկ եթէ հարկ ըլլայ արիւնս տալ: Ես կը նախընտրեմ բոլոր ունեցածներս ու կարուածներս կորսնցնել՝ քան թէ կրօնքս ուրանալ:

— Ատ ի՞նչ յանդիմութիւն է. դետին փռեցէք, ծեծեցէք ու բանտ դրէք:

— Ձեր ըսածը փաստերով ցոյց տուէք, այն ատեն ես ձեր պատիժը սիրով կ'ընդունիմ:

— Մեր ըսածը չխտակ է, եւ դուն ես ստախոսը:

— Ո՛ւր են ձեր վկաները:

— Վկաներու հարկ չկայ, մենք կը վկայենք:

— Տունս դացէք, փնտռեցէք:

— Մենք քու ծառաներդ չենք, զէնքերը բե՛ր, ապա թէ ոչ քեզ կը սպանենք:

Եւ ահա առին զինքը, բանտ տարին ու դուռը վրան դոցեցին:

Ահա զօրանոցին հիւսիսային կողմը կեցած են կառավարութեան մեծերը եւ ուրիշներ, գործ չունին, հոն աթոռներ դրած բարձերը զետեղած ու ծախսաւորիկ նըստած են: Իրարու սուրճ կը հրամցեն, նարկիլէներ առջեւին դրած: Ամէն ոք զլուսը կը շարժէ, բարձրաձայն կը խընդայ, բարձր ու գիրուկ քիթով: Անոնց մէջ կան նաեւ Շէյխեր, գլուխին փաթթոց անցուցած, որոնց ծայրերու ծոպերը աջ ու ձախ կը շարժեն: Գլուխին կը բարձրացնեն, եւ զանոնք ցնծալից կ'ուզեն սղաղած կիներուն: Կարծես թէ անոնք զեղեցիկ պարտէզի մը մէջ ըլլային ու զըւարճանային: Ամէնուն սրտերուն մէջ քէն եւ ատելութիւն կար: Անոնք կը լրտեսէին, լուրերը կը խարդախէին, եւ իրենց միտքերուն մէջ չար խորհուրդներ կը շրջէին: Կը ջանային անմեղներուն վրայ որեւէ յանցանք մը գտնել կամ ստեղծել, որ պէսզի անմիջապէս անոնց վրայ յարձակին: Կը լսեմ որ ներսը եռուզեռի մէջ են, ու մէկը միւսին կ'ըսէ. «Քրիստոնեաները բանտ թող տարուին, եւ հրամանատարները թող աճապարեն զանոնք տանջել, տարագրել ու սպաննել»:

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԱՒԱՆԻ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յունիս 10ին, Հինգշաբթի գիշերը, տըրտում պահ մըն էր, ուր աւերադոյժ բուերը երգեցին քրիստոնեաներու տանիքներուն վրայ: Ամէն ոք կը հսկէր, որովհետեւ աչքերը դոցել ու քնանալ անկարելի էր. այդ գիշերը քրիստոնեաները լացուկոծով անցուցին: Իրենց վրայ տիրեց վախն ու չըփոթութիւնը, եւ զիրենք պաշարեցին ամէն տեսակ չարիքներ: Քանի մը կիներ բանտէն ետ դարձան բոլորիկ ու փութկոտ, տունը մնացողներուն հետ հաւաքուեցան եւ սկսան տաք տաք արցունքներ թափել, մինչեւ որ լացուկոծը փճացուց անոնց աչքերն ու արտեւանուեցանք:

ԵՐԿԱԹԵԱՅ ՇՂԹԱՆԵՐԸ

Այս սեւ ու տխուր գիշերուան մէջ կրտեսնուէին անօրէն զինուորները, որոնք բերդէն վեր վար կ'ելլէին ու կ'իջնէին, զործի լծուած, կռնակին երկաթէ շղթաներ ու պարաններ շալկած՝ դէպի զօրանոց կ'երթային: Դղեակին մէջ բանտարկեալները զոյգ զոյգ կապեցին, որ պէսզի իրենց ձեռքէն չփախչին: Աստուած իմ, ո՛րքան չարութիւն եւ անդթութիւն: Այս անոնցմէ բաժնեցին որոնք որ Հայկական Ընկերութեան անդամ էին, եւ անոնց վիզերն ու ձեռքերը շղթաներով կապեցին ձեռքերն ալ դալլերով: Անդգամ թշնամիները բոլոր գիշերը շղթաները կապելով անցուցին: Անոնք դալլերու պէս գառնուկներու վրայ յարձակեցան, եւ կամ թէ անդշներու նման աղաւնիներու վրայ խուժեցին, եւ կամ թէ վազերու պէս իրենց որսերու վրայ նետուեցան որ բղբուն:

ՔԱՂԱՔԵՆ ԴՈՒՐՍ Կ'ԵԼԼԵՆ ՇՂԹԱՅԱԿԱՊ

Չանոնք զոյգ զոյգ շարեցին, ապա բանտէն հանեցին, զօրանոցին դուռը բացին ու դուրս ելան: Չարագործները զանոնք ամէն կողմէն շրջապատեցին, անոնց վըրայ սուր ու հրացան ուղղեցին եւ հրամայեցին բացարձակ լուութիւն: Անմիջապէս մուկնալի զրկեցին որ ձայնէ. «Քրիստոնեաներէն ով որ դուրս ելլէ՝ պիտի բռնուի եւ իր ազգականներուն հետ պիտի տարագրուի»: Քրիստոնեաները քալեցին մայր ճամբէն, հինգշաբթի օրուան առտուան մթնշաղկին, և ԱՆՈՆՅ ԹԻՒՆ ԷՐ 417, ԿՂԵՐԱԿԱՆ, ԾԵՐ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ, ՀԱՅ, ԱՍՈՐԻ, ՔԱՂԴԵՍՅԻ ԵՒ ԲՈՂՈՔԱԿԱՆ:

Ս. ԵՓՐԵՄԻ ՎԱՆՔԻՆ ՏԱՆԻՔԻՆ ՎՐԱՅ

Ո՛վ Քրիստոսի հերոսներ, Հաւատքի ճշմարիտ տիրաններ, ես ուղելով աչքերուս զոհուեալութիւն տալ, ձեզ վերջին անգամ մըն ալ կ'ուզեմ ողջունել:

Եթեք բարո՛ւ, ո՛վ Կաթողիկէ Եկե-

ղեցւոյ Հայրապետ, ո՛վ անուանակից Անտիոքի Իզնատիոս Պատրիարքի, դուն քաջութեամբ անոր մրցակից եղար, քիչ ատենէն անոր հետ վիպակութեամբ ալ պիտի մրցիս: Կարծես թէ դուն ժողովուրդիդ առջեւ քալելով կ'ըսես. «Ես չեմ ուզեր որ մէկը հակառակի եւ մարտիրոսութեանս պսակը առնելուս արդելը ըլլայ. ես կ'ուզեմ որ ամէնքը ինծի համամիտ ըլլան եւ թողուն որ տանջուիմ ու մեռնիմ: Որովհետեւ ես բուն փափաք մը ունիմ, որ ամէնքս ալ մեռնինք ի սէր Անոր, որ մեզի համար մեռաւ մեզ քաջալերելու»:

Եթեք բարո՛ւ, ո՛վ անմեղ քահանաներ, սուրբ եւ արդար սարկաւազներ. երթաք բարո՛ւ, ժողովուրդի ընտրեալներ, որովհետեւ դուք մրցակից եղաք նորածին Եկեղեցւոյ առաջին դարերու քահանաներուն, անոր անուանի սարկաւազներուն ու մեծ առաջնորդներուն:

Բայց ես ինչո՞ւ կը տեսնեմ որ չարագործները ձեր ձեռքերը կապած են շղթաներով. ձեր վիզերը շղթաներու ծանրութեան տակ ինչո՞ւ կը տքան: Անպիտութեան տակ ինչո՞ւ կը տքան: Անպիտան ու վարնոց մարդիկ ինչո՞ւ ձեզ պատան ու ամէն կողմ: Կը տեսնեմ ձեզ շարած են ամէն կողմ: Կը տեսնեմ ձեզ չորս չորս ու հինգ հինգ կապուած, թշնամիներն ալ աջէն ձախէն ձեզ կը հարուածեն ու կը մարակեն: Քիչ ատենէն դուք ձեր նպատակին պիտի հասնիք, ձեր փափաքները պիտի կատարուին, եւ ձեր Տիփաքները պիտի կատարուին, եւ ձեր Տիփաքները պիտի տեսնէք: Այս երանի՛, եւ հաղար երանի՛ ձեզի:

Նայեցէ՛ք այս ԶԱՐԶԱԿԱՆ ԴՂԵԱԿԻՆ, Նայեցէ՛ք այս սուրբ ուխտատեղի մը պիտի ըլլայ, եւ հոն ձեր գորովական ազգականները, սիրելիները ու բարեկամները պիտի երթան եւ պիտի անուշցնեն իրենց լեզուները ձեր յիշատակով, եւ պիտի գորանան ձեր հաւատքին մէջ մնալով, եւ պիտի շնորհաւորեն ձեզ ձեր տարած փառաւոր յաղթութեանը համար:

Ողջո՛յն այդ գեղանի եւ անոյշ հասակներուն, ողջո՛յն այդ սրբամաքուր հոգիներուն, բղբուած մարմիններուն, մտաներուն, բղբուած մարմիններուն, անոնց հետ իմ երկրա-

դուք մեր ուրախութիւնն էիք ու երջանկութիւն:

Արդ, ձեզմէ ետք ապրիլն է ոչնչութիւն: Հաւատացէ՛ք ինծի, դուք մեր կեանքը դառնացուցիք:

Մեր սրտերը խորտակեցիք, եւ արցունքով մեր աչքերը լեցուցիք:

Դուք դացիք եւ թողուցիք մեր տունները անբնակ,

Հոն բոյն դրին ու կ'երգեն բուերը չարագործալ:

Ձեզ սպաննողներուն ձեռքը ինչո՞ւ չդուստացաւ:

Անոնց աչքը ինչո՞ւ չկուրցաւ:

Ինչո՞ւ անոնց թեւը չանշարժացաւ:

Ինչո՞ւ անոնց հոգին զփոխքին մէջ չալրեցաւ:

Կարծէք թէ ձեզմէ ամէն ոք մեկնելով՝ կ'ըսէր:

Մնաս բարով, ո՛վ ապերախ Հայրենիք:

Որովհետեւ երկիրն ու երկիրը մեզի կը վիպեն, թէ մեր բռնաւորները մեզ անիրաւութեամբ սպաննեցին: Մնաս բարո՛ւ, խեղճ մայրիկ: Մնաս բարո՛ւ սղաւոր ամուսին ու տիրապետ չարս: Մնաք բարո՛ւ, մենք անդարձ կը մեկնինք: Մնաք բարեաւ, ո՛վ որը դաւակներս ու սիրելի եղբայրներս: Մնաք բարո՛ւ ազգապետներ ու բարեկամներ, Աստուած ձեզի հետ ըլլայ:

ԴԵՊԻ ՄԱՀ ԿԸ ՔԱԼԵՆ

Քրիստոնեաները քալեցին չորս չորս ու հինգ հինգ շարուած. ամէնէն վերջ կու գային Եպիսկոպոսն ու քահանաները շղթաներով կապուած: Զինուորները զանոնք պաշարած էին, հրացաններով զինուած եւ փամփուշտներով զօտեւորուած: Աստուած միայն դիտէր ինչ կ'անէինք կը դառնար այդ չարագործ զլուրներուն մէջ: Վասնզի պատրաստուած էին, կռիւի աղեղներն լաւ մը լարած, անոնց վրայ կը չարախօսէին եւ աղաւնի կը կրճատէին, եւ կը ձեծէին զանոնք որ իրենց ընկերներուն չէին հասնիր, ծեր կամ երիտա-

սարգ, հիւանդ, վերաւոր կամ որեւէ հիւանդութիւն ունեցող:

Իսկ քրիստոնեաները ուժաստատ էին արդէն բանտի մէջ քաջած նեղութիւններէն եւ յոգնութենէն. իրենց համար անհնար էր քալել, եւ աղբիւրին քով հասնելուն՝ կարծեցին թէ քիչ մը ջուր պիտի կարենան խմել: Անոնք սկսան ծարաւէն տանջուիլ, բայց ուժով մը ջուր տուող չըկար: Իսկ չարասիրտ Մամտուհը եւ իր չարագործ օղնականները ջուրին քով կեցան, իրենց անասուններուն ջուր խմացուցին ու վաղեցին հասան կարաւանին:

ԿԸ ՍԿՍԻՆ ԶԱՐԴԵԼ

Երբոր օրը սկսաւ լուսնալ, ծերերը միւսներէն դատեցին, հեռացուցին ու տարին զանոնք մօտաւոր տեղ մը, զանոնք մերկացուցին, առին զգեստները, սպաննեցին ու ետ դարձան:

Երբոր ՕՄԱՐ ԱՂԱՅԻՆ ԱՂԲԻԻՐԸ հասան, Մամտուհ անոնցմէ մի քանի տասնեակ կանչեց, զանոնք խաբեց ըսելով, թէ կ'ուզէ զանոնք իրենց տունները դարձնել, որովհետեւ, ինչպէս որ կ'ըսէր, ստուգած եւ իմացած է թէ անոնք հաւատարիմ ու անմեղ էին. զանոնք զինուորներու խումբի մը հետ տարաւ մօտաւոր դղեակ մը. մերկացնելէ ետք զանոնք, սպաննեցին ու ետ դարձան:

Ապա կանչեց ուրիշներ, սկսաւ յանդիմանել զանոնք կառավարութեան դէմ ապերախտ դատուելուն համար եւ առաջարկեց անոնց խլամ ըլլալ, հակառակ պարագային՝ զանոնք պիտի տանջէր եւ մորթէր: Անոնք բացէ ի բաց մերժեցին առաջարկը եւ բռին. «Մեմ երբեք կրօնքնիս չեմ ուրանար, ուզածդ քրէ»: Ասոր վրայ զանոնք ԱԳՐԱՍ ԴԵՆԱԿԸ զրկեց չարագործներու խումբի մը հետ, ուր լեբան զապարթը հասնելուն պէս, սուրբն ու դաշոյնները մերկացուցին, անոնց զգեստները հանելէ ետք, մորթեցին զանոնք, կըտոր կտոր բրին ու նետեցին զանոնք այն տեղ խոր փոսի մը մէջ: Չարագործները դարձան կարաւանին եւ ըսին թէ զանոնք

իրենց տունները հասցուցին ողջ առողջ: Անոնց աղաւանները ուրախացան եւ չընորհակալութեան համար մեղի նուէրներ տուին: — Այո՛, իրաւ է, զիրենք հասցուցին իրենց յաւիտենական ճշմարիտ տունը եւ երկնքի բարեկամ հրեշտակները շատ ուրախացան: Եւ փոխարէն տուին սպաննողներուն իրենց չարագործութեան հատուցումը: Ստախօսին աչքը կուրծայ. Դուրանի ՍՈՒՐԱԹ-ԷԼ-ՍԱՅՖ զլուխին մէջ կ'ըսէ. «Աստուծոյ առջեւ հպարտութիւն է, եթէ ըսէք եւ չգործէք»:

ՈՒՐԱՅՈՒՄԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Իսկ Մամտուհ այդ քրիստոնեաները ըսպաննելէն եւ հորին մէջ նետելէն ետք, կանչեց ուրիշ խումբ մը, անոնց վրայ սուտեր ու զրպարտութիւններ բարդելէն ետք, ԱՌԱՋԱՐԿԵՅ ՈՐ ԻՍԼԱՄ ԸԼԼԱՆ: Անոնք բացէ ի բաց մերժեցին առաջարկը: Եւ նախորդներու նման զրկեց զանոնք չարագործ խումբի մը հետ. սպաննեցին զանոնք, պահեցին անոնց զգեստները, ու ետ դարձան իրենց բարի սովորութեան համեմատ. կարծես թէ բան մը ըրած չըլլային: Եւ ամէն անգամ որ անոնցմէ խումբ մը տանէին, կը սպաննէին ու կը դառնային: Այս բանը շատ անգամ կրկնեցին, մինչեւ որ կապեալները կիսեցին: Եւ ամէն անգամ որ տանէին, կը ստէին ու կը զրպարտէին, կարծես թէ եթէ սուտ չըլտային՝ իրենց լեղին պիտի պատռէր: Եւ կ'ըսէին թէ անոնցմէ մէկուն վրայ ձեռք չեն բարձրացներ մինչեւ որ հասցնեն զայն անիծեալ Ռաշիտին, որպէսզի զանոնք դատէ. եթէ զանոնք յանցաւոր դառնէ, ապա թէ ոչ զանոնք ողջ առողջ տուն ճամբէ:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՄԱՀՈՒԱՆ

Իսկ մեծահոգի Գրպո՛. Իզնապիտ իմացաւ անոնց խարդախութիւնը, եւ զիտցաւ թէ անոնք, որոնք կարաւանէն բաժնուած էին, սպաննուեցան, արիւննին թափեցաւ ու զայն երկինք իրենց վարձքը ընդու-

նելու: Ապա կանչեց չարագործներուն Մամտուհ զլիաւորը, եւ ըսաւ անոր. «Ո՛վ կեղծաւոր, մեղմէ ի՞նչպէս կը ծածկես քու խարդախութիւններդ, հակառակ քու բոլոր սուտ լուրերուդ: Ես ապահով եմ, որ բոլոր ժողովուրդս քու հրամանովդ իսկ քու օղնականներէդ սպանուեցաւ եւ անոնցմէ մէկ հոգի ալ չմնաց: Հետեւաբար ես քեզմէ խնդիրք մը ունիմ, կը խնդրեմ որ հաճիս շնորհել զայն ինծի... Հրաման տուր, որ զաւակներուս հետ քիչ մը ժամանակ ամփոփուիմ, եւ սրտիս փառքները հաղորդեմ իրենց, իմ վերջին խօսքերս ըսեմ իրենց, եւ ապա ազատութիւն քեզի, ուղածդ կատարէ: Մամտուհ հրաման տուաւ զինուորներուն, որ ժամ մը քրիստոնեաներուն քովէն քաշուին: Գաջ Հովիւր դեռին ծնրագրեց քահանաներուն եւ ժողովուրդին հետ, ջերմիկ աղօթքներ ըրին զօրութեանց Տիրոջ՝ Խնդրեց ըրին զօրութիւն: Գրպո՛. Մալոյեան մէջքերին վեհափառ թաղաւորի մը կը նմանէր, որուն քով զինուորներ շարուած մտիկ կ'ընէին անոր խօսքերուն մեծ փափաքով ու սիրով: Գերապայծառ իր շուրջը հաւաքուած այդ ժողովուրդի եւ աստ-սրտերուն մէջ հրահրեց կրօնքի եւ աստուածապաշտութեան հուրը, զանոնք քաջալերեց որպէսզի մահուան ցաւերը յանձն առնեն սիրով եւ անվեհեր:

ՎԵՐՋԻՆ ԹՈՇԱԿԸ

Ապա կտոր մը հաց տուաւ, վրան սըրբազործութեան խօսքերը ըսաւ. ամէնուն վերջին արձակում տուաւ, լիակատար նեղութիւն շնորհեց, ամէնուն սուրբ Հաղորդութիւնը բաժնեց, որպէսզի զանոնք հաստատէ սուրբ Հաւատքին մէջ եւ քաջալերէ, որպէսզի անոնք կարենան համբերել ցաւերուն: Հուսկ օրհնեց զանոնք եւ ըսաւ. «Մի՛ վախճա՛ գեմքերէն ու մարտիկներէն խաղաղութիւն, եւ մի՛ խաբուի՛ք դերու քաղաքներէն, եւ մի՛ խաբուի՛ք ինքնապաշտութիւններէն: Հետեւաբար կուրեցէ՛ք մեր կրօնքին համար: Մեռէ՛ք մեր Տիրոջ սիրոյն համար, եւ գրեցէ՛ք անհուն և յաւիտենական երջանկու-

քին մը՝ ժամանակաւոր ու չնչին տանջանքով»: Երբոր Գերապայծառը իր խօսքը վերջացուց, դարձաւ Մամտուհին եւ ըսաւ. «Ես իմ գործս վերջացուցի, հիմա ինչ որ կ'ուզես՝ ըրէ»:

Մենք լսեցինք թէ երբոր քրիստոնեաները ծնրագրած Աստուծոյ կ'աղօթէին, իրենց վրայ լուսաւոր ամպ մը իջաւ, ծածկեց զանոնք աղօթքի պահուն, այդ տեղը անոյ՜ բոյրեր տարածուեցան, բոյրեր, որոնց նման երբեք անոյ՜ հոտ չէին առած: Քրիստոնեաներուն վրայ ալ տարօրինակ լոյսեր ծագեցան, որոնք յստակ կերպով յայտնուեցան անգութներուն. եւ սակայն այդ լոյսը չլուսաւորեց անոնց հոգիները, իրենց չարութեան եւ ատելութեան պատճառով: Եւ սակայն իրենց բերնով իսկ խոստովանեցան, թէ իրենց կեանքին մէջ այնպիսի հրաշալի եւ տարօրինակ տեսիլ մը երբեք չէին տեսած: Իսկ քրիստոնեաները իրենց Հովիւով ու քահանայներով իրենց շրջանակներուն վրայ ժպիտ մը ունեցան, եւ իրենց փափաքներուն վրայ ալ վեհուրեման նշաններ: Անոնց հոգիներուն մէջ ուրախութիւն մը իջաւ, կարծես թէ արդէն իսկ երկինքի արքայութեան մէջ ըլլային, եւ հոն վայելէին: Կրօնքի այդ ախոյեանները իրենց գթած ու սիրելի փրկչին հանդէպ սիրով վառուեցան: Աղօթքը հաղիւ վերջացաւ, իրենց վրայէն ամպը անյայտացաւ եւ կարծես թէ իրենցմէ իւրաքանչիւրը ինքնիրեն կ'ըսէր.

«Հոգիս, դու այս աշխարհէն հեռացիր, եւ թող զայն ուրիշներուն, «Վասնզի ինծի անանց բարեքներ կը սպասեն»:

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Ապա թշնամիները, որոնց սրտերը ատելութեան եւ անօրհնութեան խաւարով մթաղած էին, դայիներու նման այդ հեղ զառնուկներուն վրայ յարձակեցան, քշեցին զանոնք մինչեւ ԶԱՐԶԱԻԱՆ ԲԵՐԳԻՆ, ստորոտը, անոնց զգեստները մերկացուցին, սաստիկ տանջեցին, ու մերկ մերկ սպաննեցին. անոնցմէ ոչ ոք մնաց, բացի սուրբ Եպիսկոպոսէն: Անոնց մարմինները

